

TELCELL

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի
2025 թ. 2-րդ
եռամսյակի
հաշվետվություն

15.08.25

Բովանդակություն

■	<u>Կառավարման մարմինների միջանկյալ գեկույց</u>	
■	<u>Կորպորատիվ իրադարձություններ</u>	<u>3</u>
■	<u>Տերմինալային ցանցի զարգացում</u>	<u>5</u>
■	<u>Բջջային հավելվածի զարգացում</u>	<u>7</u>
■	<u>Կադրային քաղաքականությունը</u>	<u>9</u>
■	<u>Ֆինանսական վերլուծություն</u>	<u>12</u>
■	<u>Ռիսկեր և անորոշություններ</u>	<u>17</u>
■	<u>Ռազմավարությունը և զարգմացման միտումները</u>	<u>18</u>
■	<u>ՀՀՄՍ հաշվետվություն</u>	<u>20</u>
■	<u>Պատասխանատու անձանց հայտարարությունը</u>	<u>26</u>

Կարևոր իրադարձությունների Նկարագիր

1. Կորպորատիվ իրադարձություններ

Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով

Ձեկուցվող ժամանակահատվածում՝ հունիսի 3-ին, տեղի է ունեցել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը՝ բաժնետերերի ֆիզիկական ներկայությամբ և առանց ֆիզիկական ներկայության: Բաժնետերերի ընդհանուր ժողովի ընթացքում Ընկերության գլխավոր տնօրենը պատասխանեց բաժնետերերին հուզող տարաբնույթ հարցերի: Ընդհանուր ժողովը հաստատեց «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության 2024 թ.-ի տարեկան հաշվետվությունը, ինչպես նաև Ընկերության 2024 թ.-ի ֆինանսական հաշվետվությունը՝ հաստատված արտաքին աուդիտորի կողմից: Հաստատվեց նաև Ընկերության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:

Ֆինանսական հաշվետվությունների հաստատում

2024 տարվա համար աուդիտի եզրակացությամբ համախմբված ֆինանսական հաշվետվությունները նախնական հաստատվել են Խորհրդի կողմից ապրիլի 30-ին, իսկ պաշտոնապես հաստատվել են տարեկան ընդհանուր ժողովի կողմից հունիսի 3-ին:

Հահուքաբաժինների վճարում

Տարեկան ընդհանուր ժողովը որոշեց բաժնետերերին վճարել ընդհանուր 1,250,000,000 (մեկ միլիարդ երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ՝ շահույթի 78%-ը, այն է՝ յուրաքանչյուր 1 բաժնետոմսի դիմաց 36 (երեսունվեց) ՀՀ դրամ (յուրաքանչյուր բաժնետոմսի շահութաբերությունը՝ 9%): Ժողովը որոշեց շահութաբաժինները վճարել մինչև 2025 թ.-ի հուլիսի 1-ը ներառյալ:

Կանոնադրության նոր խմբագրության հաստատում

■ Կանոնադրական կապիտալի փոփոխության վերաբերյալ

2024 թ.-ի սեպտեմբերի 10-ի ժողովի որոշմամբ հաստատված Աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի հիման վրա 220,000 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխմամբ պայմանավորված՝ Ընկերության կանոնադրական կապիտալն ավելացել է 7,700,000 ՀՀ դրամով:

■ Ընդհանուր ժողովի հետևյալ իրավասությունները վերապահվել են Տնօրենների խորհրդին.

1. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
2. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ՝ պայմանավորված բացառապես Ընկերության գտնվելու վայրի փոփոխությամբ,
3. Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը, եթե այդ մասնակցությունը խոշոր գործարք չէ, և(կամ) մասնակցությունը չի գերազանցում 200 մլն ՀՀ դրամը,
4. Մասնակցությունը դուստր կամ կախյալ ընկերություններում, եթե այդ մասնակցությունը խոշոր գործարք չէ,
5. Տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության, տնօրինության անդամների վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի ու պայմանների հաստատումը:

Սույն իրավասությունների վերաբերյալ որոշումների կայացումը ժողովից անցել է Խորհրդի իրավասության տակ: Այդ որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների 3/4-ով:

Փոփոխություններ մասնաճյուղերի ցանցում

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի Տնօրենների խորհուրդը 2025 թ.-ի հունիսի 20-ին որոշել է.

1. Ընկերության «Րաֆֆի» մասնաճյուղը (ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Րաֆֆու փողոց 55/1 հասցեում գտնվող, հաշվառման համարը՝ Մ-5/31) 2025 թ.-ի հունիսի 25-ից փակել,
2. Ընկերության «Օհանով» մասնաճյուղը (ՀՀ, ք. Երևան, Օհանով 26/9 հասցեում գտնվող, հաշվառման համարը՝ Մ-5/35) 2025 թ.-ի հունիսի 23-ից փակել:

2. Տերմինալային ցանցի զարգացում

2025 թվականի երկրորդ եռամսյակում Ընկերությունը շարունակել է ներդնել նորարարական լուծումներ և զարգացնել իր ծառայությունները՝ նպատակ ունենալով բարձրացնել օգտատերերի թիվը, ապահովել տեխնոլոգիական առաջընթաց և ընդլայնել մատուցվող ծառայությունների շրջանակը:


Շարունակական բարելավում.

2025 թվականի երկրորդ եռամսյակում ընթացքում Telcell վճարային համակարգին միացվել են ավելի քան 23 նոր ծառայություններ մատուցողներ, որոնց օգտին հնարավոր է վճարումներ կատարել Տերմինալների միջոցով, իսկ դրանցից 10-ի օգտին՝ նաև Telcell Wallet-ի միջոցով: Դա զգալիորեն ընդլայնել է Telcell համակարգում հասանելի ծառայությունների շրջանակը: Նոր ծառայությունների միջոցով կատարված գործարքների թիվը եռամսյակի ընթացքում կազմում է շուրջ 11,232 վճարում: Ծառայությունների մատուցման որակը բարձրացնելու համար Տերմինալներում կատարվել է վճարատեսակների վերադասավորում և խմբավորում, ձևավորվել են նոր խմբեր և ենթախմբեր:

Գործընկերային ցանցի ընդլայնում

■ Տերմինալային բիզնեսի զարգացումը.

1. 4870 տերմինալ,
2. Առաջին կիսամյակում ավելացել է 190 տերմինալ,
3. Գյուղերում տեղադրված տերմինալների քանակը՝ 1128,
4. Մարզերում տեղաբաշխված է Ընկերության տերմինալային ցանցի 54%-ը:



3. Բջջային հավելվածի զարգացում

Օգտատերերի Բազա.

- Նոր նույնականացված հաճախորդներ՝ 28,000 նոր նույնականացված օգտատեր:
- Telcell Wallet-ի միջոցով բացված բանկային հաշիվների/քարտերի ընդհանուր թիվը եռամսյակում.
 - Բացված հաշիվներ՝ ընդհանուր առմամբ բացվել է 18,500 բանկային հաշիվ,
 - Թվային քարտեր՝ թողարկվել է 4,500 Visa թվային քարտ:
- Նոր մերձանտներ. մերձանտների և էլեկտրոնային առևտրի գործընկերների թիվն ավելացել է 110-ով: Նրանք ներկայացնում են տարբեր ոլորտներ՝ Horeca, Առողջություն, Գեղեցկություն, Էլեկտրոնիկա, Ճառայություններ, Տուն և այգի, Սուպերմարկետներ:

Ճառայությունների խթանման ակցիաներ

- Telcell Visa digital քարտերի վաճառքը խթանելու նպատակով իրականացվել է Summer fest 2025 համերգի տոմսերի խաղարկություն այն անձանց շրջանակներում, ովքեր նոր քարտի բացման հայտ են ներկայացրել 2025 թ.-ի հունիսի 20-ից հուլիսի 5-ը ընկած ժամանակահատվածում,
- Իվենթների տոմսերի վաճառքը և տրանսպորտային ուղեւորների գնումը Telcell Wallet-ով խթանելու նպատակով իրականացվել է հետևյալ ակցիան. օգտատերերը, ձեռք բերելով Դինո Պարկի մուտքի տոմս Telcell Wallet-ով, ստացել են նվեր՝ տրանսպորտի 2 ուղեւորմա:

Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) հետ համագործակցությունը

Telcell-ը շարունակում է ընդլայնել իր գործընկերների ցանցը՝ աջակցելով փոքր ու միջին բիզնեսներին և իրենց մատուցած ծառայությունների դիմաց վճարումներն ընդունելով Telcell վճարային համակարգի միջոցով:

- Telcell-ի միջոցով վճարումներ իրականացնող ՓՄՁ-ներ.
 - Ընդհանուր թիվը՝ 4,600 ՓՄՁ (QR և E-commerce),
 - Նոր միացած ՓՄՁ-ներ՝ 110 նոր ՓՄՁ (QR և E-commerce) և 10 ՓՄՁ (ծառայությունների վճարումներ Telcell Wallet-ի միջոցով):
- Տարածաշրջանային ընդգրկում. 1,010 ՓՄՁ Երևանից դուրս օգտագործում է Telcell-ի թվային վճարումների ծառայությունները:

Օգտատերերի աճ

Նոր ներդրված ծառայությունները նպաստել են օգտատերերի ներգրավմանը և ակտիվության բարձրացմանը:

- Տրանսպորտային տոմսեր. ծառայության շնորհիվ ավելացել է 3,800 նոր օգտատեր:
- Միջոցառումների տոմսեր. ծառայության շնորհիվ ներգրավվել է մոտ 400 նոր օգտատեր:

Այս տվյալները ցույց են տալիս, որ Ընկերության կողմից իրականացված ներդրումներն ու գործընկերային ծրագրերը արդյունավետ են և ուղղված են հաճախորդների փորձի բարելավմանն ու թվային էկոհամակարգի ընդլայնմանը:

Առաջարկելով բացառիկ լուծումներ, ինչպիսիք են տրանսպորտի ծառայություններ, Էլեկտրական մարտկոցների վարձույթ, և տարբեր միջոցառումների տոմսեր, մենք ուժեղացնում ենք մեր մրցունակությունը և ստեղծում այնպիսի փորձառություններ, որոնք օգտատերերը չեն կարող գտնել այլ հավելվածներում:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործման շրջանակում առաջնային տեղ է հատկացվում արդյունավետ կադրային քաղաքականության վարմանը: Այն ուղղված է անձնակազմի կառավարման արդյունավետ համակարգի ստեղծմանը, որն ապահովում է Ընկերության ռազմավարական նպատակների իրագործումը:

Կադրային քաղաքականությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.

- Արդարություն և հավասար հնարավորություններ. աշխատակիցները պետք է ունենան հավասար իրավունքներ ու հնարավորություններ՝ անկախ սեռից, ազգությունից, կրոնից կամ այլ անհատական հատկանիշներից:
- Մասնագիտական զարգացում. ստեղծվում են պայմաններ շարունակական ուսուցման և կարիերայի առաջխաղացման համար:
- Թափանցիկություն և բաց գործընթացներ. կադրային քաղաքականությունն իրականացվում է պարզ ու կանխատեսելի մեխանիզմներով:
- Մոտիվացիայի և վարձատրության արդար համակարգ. վարձատրությունն ու խրախուսման մեխանիզմները համահունչ են աշխատակցի ներդրմանը և ցույց տված արդյունքներին:
- Բարենպաստ աշխատանքային միջավայր. խթանվում է թիմային աշխատանքը, վստահության և փոխադարձ հարգանքի մշակույթը:


Սույն հաշվետվությունն ամփոփում է 2025 թվականի երկրորդ եռամսյակում Ընկերության աշխատակազմի կառուցվածքի, շարժի և մասնագիտական զարգացման վերաբերյալ հիմնական տվյալները:

Աշխատակազմի կառավարումը և մասնագիտական զարգացումը շարունակել են մնալ Շնկերության կարևորագույն ուղղություններից մեկը

- Աշխատակիցների ընդհանուր թիվը.
 - 2025 թ.-ի մարտի 31-ի դրությամբ՝ 397
 - 2025 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ՝ 388
- Աշխատակազմի համալրում.
 - Առաջին եռամսյակում ընդունվել է 13 նոր աշխատակից:
 - Երկրորդ եռամսյակում ընդունվել է 22 նոր աշխատակից:
- Թվային և տեխնիկական աշխատակիցների քանակը՝ նոր կամ վերապատրաստված.
 - Մարտի 31-ի դրությամբ՝ 9
 - Հունիսի 30-ի դրությամբ՝ 1

Գեներային կազմ և հավասարություն

- Ընդհանուր կազմ.
 - Մարտի 31-ի դրությամբ՝ 45% կանայք և 55% տղամարդիկ
 - Հունիսի 30-ի դրությամբ՝ 47% կանայք և 53% տղամարդիկ
- Կանայք ղեկավար և տեխնիկական պաշտոններում.
 - Մարտի 31-ի դրությամբ՝ 28%
 - Հունիսի 30-ի դրությամբ՝ 26%




Մասնագիտական զարգացում և վերապատրաստումներ

Ընկերությունը շարունակաբար ներդրումներ է կատարում աշխատակիցների հմտությունների բարձրացման համար:

- Վերապատրաստման մասնակիցները՝ 23 աշխատակից:

Ըստ ուղղությունների, 2րդ եռ.



■ Տեխ. և մասնագիտական հմտություններ

■ Աշխատանքային օրենսդրություն

■ Կառավարման հմտություններ

■ Անձնակազմի կառավարում

■ Ֆինանսական ռիսկերի կառավարում

■ Տվյալների վերլուծություն

■ Հաշվապահական հաշվառում

Ֆինանսական վերլուծություն և էական փոփոխություններ

Հիմնական ցուցանիշներ

Ֆինանսական կայունություն և օպտիմիզացիա

2025 թվականի ռազմավարությանը համահունչ՝ Ընկերությունը շարունակում է իրականացնել օպտիմիզացիոն գործընթացներ՝ ուղղված շահութաբերության բարձրացմանն ու ռեսուրսների առավել արդյունավետ կառավարմանը: Վերոնշյալին զուգընթաց Ընկերությունը ակտիվորեն շարունակում է զարգացնել նոր ուղղություններ՝ թե՛ տերմինալային և թե՛ բջջային հավելվածի հարթակներում:

Ընկերության հատկանշական ցուցանիշներից է երկրորդ եռամսյակում տերմինալային բիզնեսի շրջանառության զգալի աճը, որը կազմում է մոտ 5.7%՝ առաջին եռամսյակի համեմատ: Եթե այդ ցուցանիշը համեմատենք նախորդ տարվա 2-րդ եռամսյակի հետ, ապա աճը կազմում է գրեթե 6%:

Նման էական աճը ցույց է տալիս, որ նույնիսկ ամկա եռամսյակային մոտ 1% գնաճի և խիստ մրցակցության պարագայում Ընկերությունը գրագետ քայլեր է ձեռնարկում: Հիմնական քայլերից են՝ սակագների գրագետ սահմանումները, ռազմավարություն իրականացումը թե՛ համբավի բարձրացման և թե՛ նոր լուծումներ առաջարկելու ու նոր օպերատորներ ներգրավելու ուղղությամբ (տես սլայդ 5-6), որոնք էլ իրենց հերթին բերում են նոր եկամուտներ Ընկերության էկոհամակարգ:

Գլոբալ նախագծեր և որոշումներ

Տերմինալային բիզնեսում եռամսյակի ընթացքում իրականացվել են ներդրումներ երկարաժամկետ նախագծերի ուղղությամբ, ինչի արդյունքում Ընկերության հիմնական շարունակական աճող ցուցանիշներից է ակտիվ օգտատերերի թվի ավելացումը այնպիսի նախագծերում, ինչպիսիք են՝

- վարկային պրոդուկտների ընլայնումը,
- cash in/out,

և այլ աճելու հսկում ունեցող նախագծեր:

Բջջային հավելվածի հարթակում նույնպես Ընկերությունը շարունակում է բարելավել աշխատանքը, դարձնել այն անխափան և նոր լոյալ հաճախորդներ ներգրավել՝ զարգացնելով այնպիսի արդի նախագծեր, ինչպիսիք են՝

- տրանսպորտային նախագիծը (տես սլայդ 8),
- 100% by Telcell,
- արդիական նույնականացման համակարգը,
- միջոցառումների հարթակը, և այլն:

Եկամուտների և ծախսերի վերլուծություն

Հասույթը երկրորդ եռամսյակում կազմել է 2.53 մլրդ դրամ, ինչը 88 մլն-ով ավել է առաջին եռամսյակի համեմատ: Ընկերությունը, զարգացնելով այլ ուղղություններ, ստեղծել է նաև եկամտի այլ աղբյուրներ, որոնք երկրորդ եռամսյակում աճել են գրեթե 77 մլն դրամով:

Ծախսերի մասով զգալի տարբերություն է անձնակազմի գծով հոդվածում, քանի որ առաջին եռամսյակում տարեկան պարգևատրումներ են եղել: Նույնիսկ այն պարագայում, որ երկրորդ եռամսյակում եղել են աշխատավարձերի վերանայումներ, առաջին եռամսյակի հետ համեմատ ծախսերը կազմել են 140 մլն դրամով ավելի քիչ:

Նոր սերվերների և սարքավորումների գնման հետևանքով բնականոն ձևով աճել է մաշվածության և ամորտիզացիայի հոդվածը՝ 38 մլն դրամով:

Չուտ ֆինանսական եկամուտ/ծախս հարաբերակցությունը առաջին կիսամյակում արդեն իսկ գերազանցում է 2024 թ.-ի տվյալները 84.8 մլն դրամով (տես սլայդ 22)՝ հասնելով գումարային 240 մլն դրամի: Ցուցանիշների նման բարելավումը հիմնականում պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի տատանումներով և դրա ազդեցության հնարավորինս օպտիմալ կառավարմամբ:

Ծախսային Էական խնայողություններից են նաև Գովազդի և մարքեթինգի ծախսերը, որոնք երկրորդ եռամսյակում ավելի թիրախավորված աշխատանքի արդյունքում հնարավոր է եղել պակասեցնել 34 մլն դրամով: Նախորդ տարվա համեմատ խնայողությունը ավելի ակնառու է՝ եռամսյակի կտրվածքով 45%-ից ավելի:

Վարձակալության և տերմինալների տեղակայման գծով ծախսերն աճել են 8.5%-ով՝ ամսական ավելացնելով ֆինանսական բեռը մոտ 3.5 մլն դրամով: 2024 թ.-ին 2023 թ.-ի համեմատ այդ աճը կազմել է 4.5%, թեև տերմինալների քանակի Էական տարբերություն չէր գրանցվել: Իսկ այս տարի Ընկերության տերմինալային ցանցի ընլայնման և մրցակցության աճին զուգընթաց նմանատիպ աճը բնականոն է:

Այլ Էական փոփոխություններից է բանկային ծառայության ծախսի աճը 45 մլն դրամով՝ առաջին եռամսյակի համեմատ: Անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծախսն ավելի քիչ է մոտ 20%-ով:

* Այս հաշվետվության մեջ գնահատականները և համեմատականները արված են աուդիտ չանցած հաշվետվությունների հիման վրա, և կիրառված են որոշ ցուցանիշների կլորացումներ, ուստի գումարելիս կարող են հավասար չլինել միասնական ցուցանիշին:

Ակտիվների և պասիվների վերլուծություն

Ստորև ներկայացված է ակտիվների աղյուսակը (ավելի մանրամասն \$ՀՄՍ հաշվետվությունը՝ հաջորդ գլխում)։

Հազար ՀՀ դրամ	31.03.25	30.06.25	Աճ
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	1,323,140	1,277,227	(45,913)
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	2,417,106	2,435,877	18,771
Ընդամենը	3,740,246	3,713,104	(27,142)
Ընթացիկ ակտիվներ			
Այլ ընթացիկ ակտիվներ	451,541	589,489	137,948
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,210,600	1,318,656	108,056
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,666,526	4,787,818	121,292
Օգտագործման սահմանափակումով հաշիվներ	4,610,569	4,926,409	315,840
Ընդամենը	10,939,237	11,622,372	683,135
Ընդամենը ակտիվներ	14,679,483	15,335,476	655,993

Եական աճ է արձանագրվել գրեթե բոլոր ընթացիկ ակտիվների գծով։ Առաջին եռամսյակի համեմատ աճել են.

- Պաշարները՝ 142 մլն դրամով, կամ 58%-ով,
- Դեբիտորական պարտքերը՝ 108 մլն դրամով, կամ 9%-ով,
- Դրամական միջոցները՝ 121 մլն դրամով, կամ 3%-ով,
- Հատուկ հաշիվների մնացորդները՝ 315 մլն դրամով, կամ 7%-ով՝ հասնելով 4.9 մլրդ դրամի։

Ցպահանջ հաշիվների վրա ազատ դրամական միջոցները ապահովում են ԿԲ-ի կողմից սահմանված նորմատիվների պահանջը։ Այդքանով հանդերձ Ընկերությունը գրագետ համագործակցելով Բանկերի հետ՝ գեներացնում է լրացուցիչ եկամուտ ներդրումային գործունեությունից։

Ակտիվների և պասիվների վերլուծություն

Ակտիվների աճին գուզրնթաց աճում են նաև պասիվները:

Օպերատորների և այլ կարճաժամկետ պարտավորությունների աճը կազմել է գրեթե 1.2 մլրդ դրամ, կամ 16%՝ համեմատած առաջին եռամսյակի հետ, իսկ երկարաժամկետ պարտավորությունները աճել են 641 մլն դրամով: Այդ իսկ պատճառով կապիտալը նվազել է 964 մլրդ դրամով՝ դիվիդենդների տեղաբաշխումից հետո:


Պարտավորությունների աճը համահունչ է ծավալների ընհանուր աճին՝ հաշվի առնելով նոր օպերատորների ներգրավումը և էկոհամակարգի զարգացումը:

Ստորև ներկայացված է պարտավորությունների աղյուսակը.

Հազար ՀՀ դրամ	31.03.25	30.06.25	Աճ
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	834,040	1,475,069	641,029
Վարձակալության գծով պարտավորություն	133,615	148,650	15,035
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	162,550	162,550	-
Ընդամենը	1,130,205	1,786,269	656,064
Ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություն	84,196	53,976	(30,220)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7,701,864	8,896,549	1,194,685
Ընթացիկ հարկային պարտավորություններ	273,342	73,200	(200,142)
Ընդամենը	8,059,401	9,023,725	964,324
Ընդամենը պարտավորություններ	9,189,606	10,809,994	1,620,388


Փոփոխություններ սեփական կապիտալում

1-ին կիսամյակում ընկերությունը հայտարարել և տեղաբաշխել է 1.25 մլրդ դրամի դիվիդենդներ: Դրան զուգընթաց կիսամյակի ընթացքում 500 մլն դրամից ավելի գուտ շահույթ է գեներացրել՝ չբաշխված շահույթը հասցնելով 1.7 մլրդ դրամի:



Կապիտալի բաշխվածությունը ըստ հոդվածների՝ ստորև.

30.06.25 թ.-ի դրությամբ կապիտալի բաշխվածությունը



Ռիսկերի բացահայտում

Կազմակերպական գործողություններ

Հաշվետու ժամանակահատվածում կատարված կառուցվածքային փոփոխությունը արդյունավետության անկման հնարավոր ռիսկ է պարունակում, որը զսպելու համար Ընկերությունը հաջորդ եռամսյակում նախատեսում է խրախուսման նոր համակարգերի ներդրում:

Նոր կառուցվածքը կարող է նաև առաջացնել վերահսկող մարմինների պահանջներին չհամապատասխանելու ռիսկ: Այդ ռիսկը զսպելու համար հաշվի են առնվել բոլոր պահանջները և միջազգային լավագույն փորձը:

Մարքեթինգային և հաղորդակցական գործողություններ

Տրանսպորտային նախագծի շրջանակներում իրականացվել են տեղեկատվական, ուսուցողական և բացատրական բնույթի բազմաթիվ նյութերի հրապարակումներ, որոնք էականորեն զսպել են նոր համակարգից օգտվողների ռիսկերը: Կատարվել են բացատրական հրապարակումներ նախագծում Ընկերության դերի, գործառույթների և պատասխանատվության շրջանակների վերաբերյալ: Այդ հրապարակումները հստակեցրել են հասարակության պատկերացումները «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի մասին:

Բիզնես շարունակականություն

Հաշվի առնելով Ընկերության գործունեության ոլորտային բնույթը և կապը ֆինանսական շուկայի այլ մասնակիցների հետ՝ Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների անընդհատությունը կախված է ոչ միայն ներքին համակարգերից, այլև արտաքին գործընկերների՝ բանկերի, վճարահաշվարկային օպերատորների, կապի և տեխնոլոգիական մատակարարների հուսալիությունից: Նրանց մոտ առաջացած խափանումները կամ ծառայությունների դադարեցումները կարող են անմիջապես ազդել գործարքների կատարման և հարթակի հասանելիության վրա: Դրանով իսկ առաջանում է արտաքին ռիսկ, որը զսպելու նպատակով Ընկերությունը ձեռնարկում է բավարար միջոցներ, սակայն որոշ դեպքերում ֆինանսական շուկայի կառուցվածքը թույլ չի տալիս ամբողջությամբ կառավարել ռիսկը:

Ընկերության ռազմավարությունը երրորդ եռամսյակի համար

Ընկերության հիմնական ռազմավարությունն է.

- Ընկերության շահութաբերության աճ
- Telcell Wallet հավելվածի օգտատերերի քանակի պահպանում և աճ
- Telcell Էկոհամակարգի միջոցով վճարումների ծավալի աճ
- Թիմի աշխատանքի օպտիմալացում և արդյունավետության բարձրացում
- Ծախսերի արդյունավետության բարձրացում

Վերոնշյալ ռազմավարական նպատակներին հասնելու համար 2025 թվականի 3-րդ եռամսյակում Ընկերությունը, հաշվի առնելով ակտուալ փոփոխությունները, ընդգծում է զարգացման հետևյալ հիմնական ուղղությունները.

1. Կազմակերպական գործողություններ

- Ծախսերի օպտիմալացում և ծախսերի գնահատման ներդրված մեխանիզմների կիրառում ու արդյունքների գնահատում
- Աշխատակազմի գնահատման մեխանիզմի ներդրում
- Տեղեկատվական անվտանգության գերժամանակակից համակարգերի ներդրման գործընթացի վերջնականացում
- Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական անվտանգության միջազգային հավաստագրերի վերահաստատում ու նորերի ձեռքբերում

2. Մարքեթինգային և հաղորդակցական գործողություններ

- Ընկերության ընկալման, իմիջի ու դիրքավորման փոխակերպում որպես ունիվերսալ և ճկուն ֆինանսական Էկոհամակարգ
- Էկոհամակարգի ծառայությունների, հնարավորությունների և աշխատանքային սկզբունքների մասին տեղեկացվածության մակարդակի բարձրացում

3. Բիզնես ուղղվածության գործողություններ

- Տրանսպորտային համակարգի շրջանակներում իրականացվող բարելավումներ
- Գործընկեր բանկերի վարկային պրոդուկտների տրամադրման հնարավորություն Telcell Wallet հավելվածի միջոցով
- Նոր CRM համակարգի ներդրում
- Visa թվային քարտից կանխիկացման հնարավորության գործարկում
- Cash Out` բիզնեսի նոր ուղղության գործարկում
- Դրամական փոխանցումների ոլորտում նոր գործընկերոջ հետ համագործակցության մեկնարկ
- Տերմինալային ցանցի ընդլայնման գործընթացի իրականացում
- Սուպերմարկետների խոշոր ցանցերում Telcell Wallet հավելվածով վճարման հնարավորության ներդրում և ընդլայնված համագործակցության մեկնարկ
- Նոր ենթաբրենդների ներքո գործող պրոդուկտների ընդլայնում
- Նոր մարքեթինգային մասշտաբային արշավների իրականացում

ՖՀՄՍ համախմբված հաշվետվություն

1. Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	31/12/24	30/06/25
Ակտիվներ		
Հիմնական միջոցներ	1,221,001	1,277,227
Ոչ նյութական ակտիվներ	578,911	655,825
Գույքի	1,157,700	1,157,700
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	201,408	160,463
Կանխավճարներ	81,881	34,788
Տրամադրված փոխառություններ	241,244	341,244
Հետաձգված հարկային ակտիվներ	85,857	85,857
Ոչ ընթացիկ ակտիվներ	3,568,002	3,713,104
Պաշարներ	343,947	388,839
Տրամադրված փոխառություններ	45,329	39,373
Ավանդներ բանկում	155,326	161,277
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	1,446,408	1,318,656
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7,915,646	4,787,818
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	4,337,560	4,926,409
Ընթացիկ ակտիվներ	14,244,216	11,622,372
Ընդամենը ակտիվներ	17,812,218	15,335,476

1. Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	31/12/24	30/06/25
Կապիտալ և պահուստներ		
Բաժնետիրական կապիտալ	1,212,750	1,212,750
Էմիսիոն եկամուտ	1,405,250	1,405,250
Պահուստային կապիտալ	188,310	181,913
Զբաղիչված շահույթ	2,471,789	1,713,680
Ընկերության սեփականատերերին վերագրելի սեփական կապիտալ	5,278,099	4,513,593
Զվերահսկվող բաժնեմաս	11,889	11,889
Ընդամենը սեփական կապիտալ	5,289,988	4,525,482
Պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	1,290,678	1,475,069
Վարձակալության գծով պարտավորություն	148,650	148,650
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	162,550	162,550
Ոչ ընթացիկ պարտավորություններ	1,601,878	1,786,269
Վարձակալության գծով պարտավորություն	84,196	53,976
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10,590,202	8,896,549
Ընթացիկ հարկային պարտավորություններ	245,954	73,200
Ընթացիկ պարտավորություններ	10,920,352	9,023,725
Ընդամենը պարտավորություններ	12,522,230	10,809,994
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	17,812,218	15,335,476

2. Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2024	2025 1-ին կիս.
Հասույթ	10,335,029	4,980,775
Գործակալներին վճարված միջնորդավճարներ	(3,388,524)	(1,691,039)
Այլ եկամուտ	1,586,963	712,458
Անձնակազմի ծախսեր	(2,732,208)	(1,513,011)
Վարձակալության գծով ծախսեր	(569,317)	(360,396)
Մաշվածություն և ամորտիզացիա	(413,707)	(209,870)
Թույլտվության վճարներ	(313,536)	(250,344)
Ինկասացիոն ծառայություններ	(457,008)	(329,219)
Գովազդի և մարքեթինգի ծախսեր	(668,286)	(215,658)
Աջակցման և սպասարկման ծախսեր	(154,025)	(84,799)
Բանկային ծառայությունների վճարներ	(511,776)	(200,067)
Պարտքային կորուստների գծով ծախս/ծախսի հակադարձում	(64,421)	(7,594)
Այլ ծախսեր	(754,432)	(378,541)
Շահույթ գործառնական գործունեությունից	1,894,752	452,695
Ֆինանսական եկամուտ	444,860	316,882
Ֆինանսական ծախսեր	(289,648)	(76,825)
Զուտ ֆինանսական եկամուտ/ծախս	155,212	240,057
Շահույթ մինչև հարկերը	2,049,964	692,752
Շահութահարկի գծով ծախս	(453,322)	(152,813)
Տարվա շահույթ	1,596,642	539,939

3. Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Պահուստային կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը	Չվերահսկվող բաժնեմաս	Ընդամենը սեփական կապիտալ
2023 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,078,000	-	161,700	2,416,860	3,656,560	11,889	3,668,449
Տարվա շահույթ				1,596,642	1,596,642		1,596,642
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք				1,596,642	1,596,642		1,596,642
Սովորական բաժնետոմսերի թողարկում	134,750	1,405,250			1,540,000		1,540,000
Շահաբաժիններ*				(1,419,000)	(1,419,000)		(1,419,000)
Հատկացում պահուստին			20,213	(20,213)	-		-
Այլ օգտագործումներ				(96,103)	(96,103)		(96,103)
Գործարքներ սեփականատերերի հետ	134,750	1,405,250	20,213	(1,535,316)	24,897	-	24,897
2024 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,212,750	1,405,250	181,913	2,478,186	5,278,099	11,889	5,289,988
Տարվա շահույթ				539,939	539,939		539,939
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք				539,939	539,939		539,939
Սովորական բաժնետոմսերի թողարկում					-		-
Շահաբաժիններ*				(1,250,000)	(1,250,000)		(1,250,000)
Հատկացում պահուստին					-		-
Այլ օգտագործումներ				(54,445)	(54,445)		(54,445)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	(1,304,445)	(1,304,445)	-	(1,304,445)
2025 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ	1,212,750	1,405,250	181,913	1,713,680	4,513,593	11,889	4,525,482

4. Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2025 2-րդ եռ.	2024
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված միջնորդավճարներ	4,944,886	10,112,095
Վճարված միջնորդավճարներ	(1,693,290)	(3,348,597)
Չուտ մուտքեր արտարժույթով գործառնականություններից	655,763	1,495,447
Մուտքեր մատուցված այլ ծառայություններից	267,482	460,269
Ստացված այլ եկամուտ	32,097	50,497
Վճարումներ աշխատակիցներին	(1,493,345)	(2,718,767)
Այլ ծախսեր	(1,946,367)	(3,401,121)
Ստացված տոկոսներ	275,534	444,860
Դրամական միջոցների հոսքեր մինչև փոփոխությունները գործառնական ակտիվներում և պարտավորություններում	1,042,761	3,094,683
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Օգտագործման սահմանափակումով հաշիվների մնացորդներ	(588,849)	1,621,691
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	32,501	(516,609)
Պաշարների փոփոխություն	(44,892)	(70,977)
Կանխավճարների փոփոխություն	44,400	58,082
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում	-	-
Օպերատորներին վճարվելիք գումարներ	(1,837,839)	(1,828,394)
Գործակալների կողմից դեպոնացված միջոցներ	625	(99,575)
Այլ պարտավորություններ	62,649	80,629
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցների հոսքեր մինչև շահութահարկը	(1,288,644)	2,339,530
Շահութահարկի վճարում	(357,991)	(517,443)
Վճարված տոկոսներ	41,247	(129,513)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(1,605,388)	1,692,574

4. Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	2025 2-րդ եռ.	2024
Ներդրումային գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր		
Մուտքեր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից	-	18,526
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(277,200)	(655,881)
Ավանդի տեղաբաշխում	-	(162,000)
Ավանդի ելքագրում	-	162,033
Տրամադրված փոխառություններ	(136,064)	(45,288)
Տրամադրված փոխառությունների մարում	-	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(413,264)	(682,610)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերի և փոխառությունների մարում	(995,832)	(2,197,024)
Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարումներ	(61,424)	(104,295)
Վճարված շահաբաժիններ	(83,972)	(31,019)
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից	-	1,540,000
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(1,141,228)	(792,338)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	(3,159,880)	217,626
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	7,915,646	7,902,100
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(4,007)	(83,399)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	36,060	(120,681)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	4,787,819	7,915,646

2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն 2025 թվականի երկրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

Գլխավոր հաշվապահ
Արթուր Թորոսյան



Պատասխանատու ֆինանսական հաշվետվությունների մասով

Գլխավոր տնօրեն
Արտյոմ Ղազարյան



Պատասխանատու ոչ ֆինանսական հաշվետվությունների մասով

15.08.2025թ.



Սույն հաշվետվությունը պարունակում է ապագային ուղղված հայտարարություններ, որոնք վերաբերում են գործառնական ծավալների ու ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ Շնկերության ընթացիկ սպասումներին և կանխատեսումներին: Այս հաշվետվության մեջ մենք ներկայացրել ենք մեր սպասումներն ու կանխատեսումները Շնկերության ապագա գործունեության վերաբերյալ, որոնք ենթակա են հայտնի և անհայտ ռիսկերի, անորոշությունների և այլ գործոնների, ինչի արդյունքում իրական արդյունքները կարող են զգալիորեն տարբերվել կանխատեսվածներից: Այդ գործոնները ներառում են, բայց չեն սահմանափակվում՝ տեխնոլոգիական փոփոխությունները, կարգավորող դաշտի զարգացումները, մրցակցային ճնշումը և սպառողական վարքագծի փոփոխությունները, որոնցից շատերը Շնկերության վերահսկողությունից դուրս են:

Ուստի՝ սույն փաստաթղթում ոչինչ չի կարող դիտարկվել որպես շահույթի երաշխիք կամ կանխատեսում:

Սույն հաշվետվության մեջ ներկայացված որոշ ֆինանսական տվյալներ հիմնված են Շնկերության ներքին կառավարչական հաշվառման վրա և չեն անցել անկախ աուդիտ:

Հնարավոր են էական տարբերություններ վերջնական աուդիտ անցած տարբերակի հետ: Թվային տվյալները կարող են ենթարկված լինել կլորացման, և, հետևաբար, որոշ աղյուսակներում և գրաֆիկներում ներկայացված հանրագումարները կարող են չհամապատասխանել դրանց բաղադրիչների ճշգրիտ թվաբանական գումարին:

TELCELL

Հակոբ Հակոբյան 3, հիմնական մասնաշենք, 1-ին սեկցիա, 3-րդ հարկ
info@telcell.am +374 60 272 222 +374 60 272 223
«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ գործունեությունը վերահսկում է ՀՀ ԿԲ-ն: